

ամենամօտիկ ազգականներն են, երբեմն մշտական «հարեամները»։ Իրականում, առանց հարեամի համդեպ մեծ սէր ունենալու, այնպես ինչպես Յիսուս նկատի ուներ, ամուսինների, եղբայրների եւ քույրերի, ազգականների եւ հայրենակիցների միջեւ նախասկզբնական սէրը շուտով կը վերածուի տարածաշրջանների եւ նոյնիսկ առէլի վառ։ Միջապգային յարաբերություններն են նկատի առնելով՝ հետեւեալ հետեւութիւնը կարելի է անել. ոչ մի հարեամն պէտք չէ օգտագործուի կամ փոխաբերուի՝ ելնելով ազգակցական յարաբերությունների շահերի դիրքերից։ Սա է այն սկզբունքը, որի պայմանների համաձայն առաջացած հսկայական ոճրագործությունները, ինչպիսին են անաբեկչութիւնը, անարդար պատերազմը եւ ցեղասպանութիւնը, մենք դատապարտում ենք իրաւացի պայտյթով։

ՈՐՔԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Հարցը պէտք է առէլ հետապնդել. երբեւէ կը լինի՝ այնպիսի հասարակութիւն, որի անդամները անտեսեն սելնդական մերձատրութիւնը՝ ի նպաստ հոգեւոր կապերի կամ բացառապէս տիեպերական, եւ ոչ իշխանական շահերի օգտին։ Յիսուս Բրիտոսի հայրենակիցների մէջ իշխող տպւորների համար, այսպիսի հասարակութեան հարց չկար, քանի որ դա, նախ եւ առաջ ցանկալի չէր։ Այդ տեսակ հասարակութեան պաշպանողութիւնը պարպապէս մի սպառնալիք էր իրենց կրօնական նախասիրութիւններին եւ հաւաքական գոյատեւմանը։ Յիսուս խաչուեց եւ պատրաստ է մէկ անգամ եւս գամուելու Խաչին, որպէսպի ցոյց տալ, թէ փոխադարձ ընկերակցութիւնը, որը հիմնուած է այն ճանաչման վրայ, թէ անհատը եւ ուրիշները նոյն Հօր պաւակներն են, որը երկկրում է, (անջատո նոյն Իշխանի հպատակներից) եւ սրա հետեւանքով բարոյական վերաբերմունքը միակ պայմանն է, յառկապէս մարդկային ներուժի իրագործման համար։

Ուժը, որին մենք կոչում ենք Սատանայ, բնութագրուել է իբրեւ աշխարհի Իշխանը, այսինքն՝ ժամանակի եւ տարածութեան Իշխանը։ Վերջին դարի գլխաւոր մի ստոտածաբան Կառլ Բարթը, նկատել է, որ Հին Ուխտում Աստծու ժողովուրդը սպառնալիքի տակ էր կամ նրանք միշտ վայրագ յարձակումների են ենթակուել այնպիսի ապգերի կողմից, որոնք Տէր Աստծուն չէին պաշտում։ Սա փոխարինուել է Նոր Ուխտի մէջ ամբողջ մարդկութեան կողմից, Սուրբ Երրորդութեան մէկ ընտանիքը, որի միակ թշնամին Սատանան է։ Առաջին պարագային, մենք ունենք մի ապգ, ընդդէմ մի ամբողջ ապգերի բազմութեան։ Յաջորդում, մենք ունենք ամբողջ աշխարհը ընդդէմ մի թշնամու՝ սատանայի, մարմնի աչքերի համար անտեսանելի։ Եթէ Ա-ն եւ Բ-ն թշնամիներ են, ապա, նրանք պէտք է անդրադառնան, որ ըստ Նոր Ուխտի՝ նրանց թշնամութիւնը հետեւանք է այն իրողութեան, որ միասին հասարակաց թշնամի ունեն, այսինքն՝ Սատանան։ Նախ եւ առաջ, նրանք թշնամիներ չէին լինի առանց Սատանայի աշխատանքի եւ եթէ նրանք թշնամիներ են, ապա պէտք է հաշտուեն։ Սատանան, որ մի յեգեոն է, երկու կոտորանի, դուրս ցցուած ականջներով եւ կպակով, նետի սուր ծայրով ուժեղ պոչ ունեցող մի արարած չէ։ Ոչ էլ աշխարհի շուրջ սաւառնող ոգի։ Սատանան սանձապերծուած գործունեայ ուժականութիւն է։ Նրան սանձապերծելու մի եղանակը յուպիչ հռետորութիւնն է եւ իր պատկերի համաձայն մեր թշնամու

վերակերտումը: Նա հետեւանք է մարդկանց անգիտակցութեան եւ չանդրադատնալուն, թէ նրանք կարող են շնորհի միջոցով պայմանաւոր գոյութեան թշնամութիւնները յաղթահարել: Իրար թշնամի բոլոր խմբերի հասարակաց թշնամին Սատանան է: Նա նաեւ հայթաթում է դրդապատճառները եւ թելադրում է պատճառները, որոնք նպաստում են այսպիսի թշնամութեանը:

Սովորաբար, աշխարհում մենք մեր անձերը սահմանում ենք, հաշուի առնելով մեր պատկանած խումբը եւ կամ էլ չպատկանած խումբը եւ կամ խմբերը: Ամբողջ արտաքին քաղաքականութիւնը հիմնուած է անձի ինքնութիւնը հաստատող այս տարբերակի վրայ: Ենթադրական քրիստոնէական աշխարհում որեւէ տեղ այլեւս արտաքին քաղաքականութիւն չի լինի: Մեր խմբից տարբեր խմբաւորումներ կը լինեն, բայց ոչ օտար ազգեր: Պատերապմներ եւ ահաբեկչական գործողութիւններ, եւ պատերապմների ու ահաբեկչութեան տարածանութիւններ պիտի լինեն այնքան ժամանակ, որքան առկա արտաքին քաղաքականութիւնը: Բրիստոնէական տեսիլքը չընտրի իրեն որպէս ուղեցոյց: Սրան հակառակ փաստարկութիւն ընդունելով հանդերձ, նոյնիսկ պատմութեան վրայ նետած մի պարզ հայեացք, ցոյց է տալիս, որ մենք պատմութիւնից չենք սովորում (դասեր չենք քաղում): Պատմութիւնը կարող է թելադրել որոշ սկզբունքներ, որոնցով մենք պէտք է ապրենք, բայց պատմութիւնը այդ ուժը չունի, որ մեզ պարտադրի որ մենք որդեգրենք իր առաջարկած սկզբունքները: Առաջին Համաշխարհային պատերապմի Յեղասպանութիւնը եւ երկրորդ Համաշխարհային պատերապմի Հոլոքոստը չկարողացան կանխել Ռուսոյի, Բուրուդիի եւ Կոսովոյի մէջ կատարուած ցեղասպանութիւնները, ի հեճուկա աշխարհի չորս կողմը լսող «Էրբեք նորից» աղաղակների: Յիսուս Բրիստոսը շատ լաւ յատկեցնում է, որ աշխարհը ինքնին չի կարող ունենալ մի տեսակ համակարգ, որը կարողանայ թոյլատրել խաղաղութիւն՝ բարի կամք ունեցող մարդկանց մէջ:

Անգլերէնից թարգմանեց՝

ՅՈՒՆԱՆ ՍԱՐԿԱՆԱԳ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԵԶՆԻԿ ՎՐԴ-Ի ԽՐԱՏՆԵՐԷՆ

Աստուածատէր անձը իր կամքին կը զգուշանայ՝ ինչպէս որ թշնամիէն:

Աւելի լաւ է մարտի մտքով ննջել, քան պիղծ մտքով աղօթք մատուցանել, եւ վարձատրութիւն չստանալ եւ ի վուր աշխատիլ:

Մարմնի նեղութեամբ չաղչարել, եւ սիրտը՝ Աստուծոյ երկխոյով, որպէս զի աներկիւղ մնաս Սատանային մահաբեր նետերէն:

Ան որ երկխոյած անձը կը սիրէ, սիրոյ արձան կը կանգնէ Աստուծոյ եւ անհաշտ թշնամութիւն (կը յայտարարէ) Սատանային դէմ:

Մէրը եւ երկխոյը քեզի բնութիւն դարձուր, որպէս զի խաբէութենէ չուստապիս:

Ողջափ ինքիւնքդ պրկես, տառապիս, նեղութիս եւ համբարես, անապական զանձ կը պատրաստես քեզի համար երկինքի մէջ, իսկ էթէ տրոննդ եւ դժգոհիս, ի վուր կը գործես եւ չես վարձատրուիլ:

Բրիստոսի չաղչարանքներովը պօրացիր եւ համբարէ՛ Անոր համար, որպէս զի վայելէս անանց բարիքները:

Ան որ զարնան հանգիստ կ'ընէ, ձմեռը տովէն եւ սառնամանիքէն կը մեռնի:

Ան որ այստեղ իր մարմինը կը պարարտացնէ, յախտնական հանգիստ չի մոռնալ:

Սիրով հնաւանդէ, յոյսով աղօթէ, հաւատքով գործէ եւ երկնային հարսանիքին պիտի պայծառանաս: